Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

ՄԱԱԶԿ-ը զարգացնում է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի աշխատակիցների կարողությունները որակի կառավարման և ներքին աուդիտ իրականացնելու ուղղությամբ

Երևան, Հայաստան – 2025 թ. հունիսի 16- 20 – Շարունակելով Հայաստանի որակի ենթակառուցվածքը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու գործընթացը՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ) ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակում հնգօրյա վերապատրաստում է անցկացնում Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) աշխատակիցների համար:

Դասընթացի նպատակն է ամրապնդել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի տասն աշխատակցի գիտելիքները լաբորատոր որակի կառավարման համակարգերի գնահատման և ISO/IEC 17025 ստանդարտին համապատասխան ներքին աուդիտի իրականացման ուղղությամբ: Մասնակիցները խորացնում են իրենց գործնական գիտելիքներն աուդիտի մեթոդների կիրառման, ստանդարտների պահանջների մեկնաբանման, լաբորատորիայի ընդհանուր աշխատանքի ու դրա համապատասխանության գնահատման ուղղությամբ:

Ծրագիրը հիմնված է Եվրոպական որակի կազմակերպության անդամ հանդիսացող և միջազգային ճանաչում ունեցող Quality Austria հավաստագրման սխեմայի վրա:

Վերապատրաստման ավարտին ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի աշխատակիցները մասնակցելու են լաբորատոր աուդիտորի հավաստագրման քննության: Քննությունը հաջողությամբ անցած մասնակիցները ստանալու են ԵՈԿ լաբորատոր աուդիտորի վկայական:

Այս նախաձեռնությունն ընդգրկված է Հայաստանի ազգային չափագիտության և որակի ենթակառուցվածքի ամրապնդման ռազմավարության մեջ: Աուդիտի և համապատասխանության գնահատման ոլորտում տեղական կարողությունների զարգացմամբ Հայաստանը մեծացնում է իր պատրաստվածությունը միջազգային հավաստարմագրմանը, խթանում տնտեսական մրցունակությունը և ապահովում համապատասխանությունն ԵՄ շուկայի պահանջներին:

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագիրն իրականացնում է ՄԱԱԶԿ-ը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի կարողությունները՝ շահառուներին միջազգայնորեն ընդունելի չափագիտական

ծառայություններ մատուցելու համար: Հայաստանի չափագիտության համակարգի իրավական, կառուցվածքային և տեխնիկական կարգավորումների բարելավման միջոցով ծրագիրը նպաստում է համակարգի արդիականացմանը՝ խթանելով տնտեսության դիվերսիֆիկացիան և առևտրի մրցունակության բարձրացումը, ինչը համահունչ է ԵՄ-ի հետ ստորագրված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) Հայաստանի ստանձնած հանձնառություններին:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել՝
Ծրագրի ղեկավար Յոնգ Վուին՝ C.WU@unido.org
Ծրագրի համակարգող Հայաստանում Մանե Թափալչյանին՝ m.tapaltsyan@unido.org